ԿԱՐԾԻՔ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] 1-ին հոդվածով նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, որի համաձայն՝ սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գգալի չափ է համարվում անսովոր օգտագործողի, այսինքն՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող նյութեր երբևէ չօգտագործած անձի օրգանիզմի վրա միջին հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար որպես կանոն բավարար թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափը:

Նշենք, որ «Օգտագործողի» եզրույթը կիրառվում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածում, որով սահմանվում է, որ սույն գլխի իմաստով մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոցեներգործուն) խիստ ներգործուն կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափեր են համարվում *անսովոր օգտագործողի* օրգանիզմի վրա միջին հոգենեոգործուն կամ միջին թունավոր ազդեցություն թողնելու համար որպես կանոն բավարար մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի նվազագույն չափերը:

Գտնում ենք, որ «օգտագործողի» եզրույթը վիճահարույց է, քանի որ գործնականում որոշ դեպքերում այն կարող է լայն մեկնաբանվել:

Ավելին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 44[2]-րդ հոդվածում օգտագործվում է «գործածել» եզրույթը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերոնշյալ հոդվածներում «օգտագործողի» եզրույթը փոխարինել «գործածողի» եզրույթով:

[1] Այսուհետ՝ Նախագիծ

2. Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասի առաջրկվող նոր խմբագրության պարագայում վիճահարույց է նաև «երբևէ չօգտագործած անձի» եզրույթը: Գտնում ենք, որ գործնականում հնարավոր չէ պարզել, թե արդյոք տվյալ անձն օրինակ վերջին 10 տարվա ընթացքում օգտագործել է թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող նյութեր, թե՝ ոչ:

Ավելին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 110^2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվում է նոր խմբագրությամբ, որտեղ օգտագործվում է «անսովոր օգտագործող» եզրույթը, որը սակայն, ի տարբերություն «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի, մասնավորեցված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող «երբևէ չօգտագործած անձի» եզրույթը փոփոխելու հնարավորությունը, ինչպես նաև մասնավորեցնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածում օգտագործվող «անսովոր օգտագործող» եզրույթը:

3. Նախագծի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, *իսկ օրենքի 4-րդ հոդվածը՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներզործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զզալի չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելու պահից*:

Միաժամանակ, Նախագծի 4-րդ հոդվածով ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածները:

Խնդիրն այն է, որ օրինակ Նախագծի 3-րդ հոդվածով փոփոխություն է կատարվում ՀՀ քրեական օրենսգրքի 275-րդ հոդվածի 5-րդ մասում: Այսպես, 275-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, սույն օրենսգրքում թունավոր նյութերի ցանկը՝ համաձայն սույն օրենսգրքի հավելված N 2-ի, մինչդեռ Նախագծով առաջարկվող փոփոխության արդյունքում նշված 5-րդ մասը շարադրվում է հետևյալ կերպ՝ «Սույն օրենսգրքում նշված թունավոր նյութերի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Ստացվում է, որ անցումային դրույթների վերոնշյալ կարգավորումների արդյունքում Նախագծի համապատասխան փոփոխությունն ուժի մեջ կմտնի այն ժամանակ, երբ ՀՀ կառավարության կողմից դեռևս սահմանված չեն լինի թունավոր նյութերի ցանկը և այդ ցանկը սահմանող հավելվածներն ուժը կորցրած կլինեն:

Համանման խնդիր առկա է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի անցումային դրույթներում: Մասնավորապես, նշված նախագծի 5-րդ հոդվածով օրենսգրքի 1-ին և 2-րդ հավելվածները ճանաչվում են ուժը կորցրած, այնինչ նախագծի 6-րդ հոդվածով սահմանված անցումային դրույթներով միայն օրենքի 5-րդ հոդվածն է ուժի մեջ մտնում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գգալի չափերը, մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներցործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, ինչպես նաև դրանց զգալի չսվլերը սահմանող ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու պահից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերախմբագրել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի անցումային դրույթները՝ նախագծերով առաջարկվող փոփոխությունների կիրառելիությունն ապահովելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ